

Անոր համար ՏԵՐ եփովա
այսպէս կ'ըսէ, ահա եւ Սիւ-
նի մէջ վէճ մը կը գնեն իր-
բնի հիմ: Ընտիր վէճ, պատ-
ուական անկիւն, հաստատան
հիմ, ով որ հաւատայ անոր,
պիտի ջարտորայ փախելու:
Եւայ. ԻԸ. 16

ԲԱՆԲԵՐ

ՀՈԳԵՒՈՐ ԱՄՍԱԹԵՐԹ
ԱՄԵՆՈՒՆ ՀԱՄԱՐ

Ուստի
եթէ Որդին
ձեզ ազատ ընէ,
ճշմարտապէս
ազատ պիտի
ըլլաք:
Յովհ. Ը. 36:

"PANPÈRE" REVUE MENSUELLE RELIGIEUSE ARMÉNIENNE
Բաժնեգին տարեկան.— Ֆրանսա եւ Սուրիա 5 ֆր. Արտասահման 1,50 շիլ կամ 40 ամերկ. Սէնթ
RÉDACTEUR H. N. GHAZAROSSIAN, 29, Rue Fauchier — MARSEILLE (France)

Թիի 11 Դ. ՏԱՐԻ ՆՈՅԵՄԲԵՐ 1928

ԱՆՁՆՈՒՐԱՑՈՒԹԵԱՆ ՀՈԳԻՆ

Անձնուրացութեան այս Աստուածային մտայ-
նութիւնը սրտի յատկութիւնն մըն է եւ հոգիի
զօրութիւնն մը, որ կը վարուի Սուրբ Հոգիին ձեռ-
քով: Անիկա բառերով չի կրնար նկարագրուիլ
բայց կարելի է անոր մասին մի քիչ խօսիլ:

**Ճշմարիտ անձնուրացութիւնը անդորրութեան
հոգի մը ունի:** Կը տառապի առանց իր տառա-
պանքին խորութիւնը ցոյց ս առւ մարդոց: Շուն
մը ամենակողմէի ցաւէն կամ տոկումէ մը կը
սկսի կաղկանձել, բայց գառնուի կը տանջուի
եւ կը գալարուի լուրձեամբ: Իր արցունքները
սրտի արցունքներ են: Յանդիմանութիւններ կը
կրէ, կը դատուի, կը քննադատուի, սխալ կը
հասկցուի, ամէն տեսակ յարձակում կը կրէ: Կը
կաշկանդուի առանց հաշուածելու, յանդիմա-
նելու եւ կամ սպառնալու:

**Անձնուրացութեան հոգին անբաժանելի է
կանխարեալ հոգատակելէն:** Աստուածային
բունն սիրոյ բողձանքէ մը մղուած՝ սրտի ան-
դորրութեամբ ստորագրեց իր անձին մահուան
դատաւարութիւնը, ու այժմ հազարաւոր
պղտիկ պարգէներ եւ անվնաս աշխարհային
ոգրախոյժիւններ, գեղեցիկ յոյսեր, բարեկամա-
կայն կապեր կրնան իր ձեռքէն խզուիլ առանց
իր աստուածային հիւս նուիրումը եւ իր անդոր-
շութիւնը վրդովելու:

**Անիկա հաճախեալութեան հոգին է առանց
անձնական ծրագրերի:** Աստուծոյ մատովը
վարկենաստէյ ունի մէկ ուղղութեան կրնայ
աւժոյշորդուիլ անիկա կրնայ բռնու մը եւ կամ
պալաւտ մը մանել միեւնոյն հովատակութեամբ

եւ ազատութեամբ: Իր անձնական կամքը կոր-
սուած է Աստուծոյ հետ միացման փառքին մէջ:
Անիկա կրնայ հին ցնցոտիներ հաճնելով եւ պարզ
կերակուրներով ապրիլ երախտապարտ եւ գո-
հունակ մտայնութեամբ առանց ուրիշներու ու-
նեցած գեղեցիկ բաներուն բաղձալու եւ անոնց
հանդէպ նախանձի խորհուրդներ կրելու:

**Անիկա տառապանքը իբր բնական սնունդ
է՝ չընդունի:** Եւ շատ մը քրիստոնեաներու սար-
սափ ազդող դերբուկ խաչը կը գրկէ ներքին
բաղքը եւ խաղաղ հոգիով մը, վառուկ գիտէ
Թէ բոլոր տառապանքները իր սէրը աւելի պի-
տի անեցնեն: Ինչ բան որ ուրիշ քրիստոնեաներ
իբր ծանրութիւն կը նկատեն եւ անկէ կը փախ-
չին, սիրով կ'ընդունի իբրեւ ազդակ մը գերեւ-
ջանիկ միութեան Աստուծոյ հետ: Այս հոգին
ուրիշ բան չի պահանջեր, եթէ ոչ աւելի սէր.
սիրով կը մեռնի կրկին եւ կրկին քրիստոսի
նման ապրելու համար: Կը սիրէ իր Թշնամիները
կատարեալ սիրով: Այս հոգին մեծ եռանդով
քրիստոսի վերստին գալստեան կը բաղձայ, Անոր
փառաւորութիւնը հաճնելու տենչով մը: Զպիտի
ուզէր բնական ուրախութիւններ վայելել, եթէ
անոնք իր բնական մարմնին անհրաժեշտ պէտ-
քերուն եւ անոր կազդուրութեան իբր ազդակ
չծառայէին:

**Անիկա մարդոց կողմանէ տրուած պատիւը
իր անձին համար չընդունի:** Եթէ անիկա մար-
դոցմէ փառք եւ կամ պատիւ ընդունի, անմի-
ջապէս Տէրոջը զոհի սեղանին վրայ կը դնէ փո-
խանակ իր անձին պահելու զանոնք: Իր ամենա-

մեծ վայելքն է Աստուծոյ մէջ ընկղմիլ եւ պատիկ ըլլալ իր ներքին բաղձանքն է ընդ միշտ Աստուծոյ եւ մարդոց առջեւ խոնարհ ըլլալ: Կը խուսափի վիճաբանութիւններէ եւ վիճաբանութիւն վերցնող հարցերէ եւ աստուածաբանական պատճառաբանութիւններէ:

Անիկա համեստ է եւ չափաւոր: Աւելի պիտի սիրէր ուրիշներուն ցաւերը իր վրան առնել քան թէ անոնց ուրախութիւնները խանգարել: Ինքը ներքին քաղցը տեսութիւն մը ունի քրիստոսի անձի մասին եւ Անոր աստուածային գեղեցկութենէն եւ քրիստոսի ներքին կեանքէն այնքան պարզութեամբ է որ նոյնիսկ աշխարհի ամենագեղեցիկ եւ ամենափառաւոր բաները ոեւէ քարշողական զօրութիւն մը չունին իրեն համար:

Երբ մարդ սրբութեան կեանքի սեմէն ներս մտնէ, կը հասկնայ այս հոգիին սկզբնաւորութիւնը որ կանչուած է միշտ աւելի անկող եւ զօրանալու, մինչեւ որ անձին խաչելութիւնը եւ անձնահրաժարումը ամէն ինչ լափող կրակ մը ըլլայ իր մէջ: Այն ատեն ամէն տեսակ ցաւեր ու դժուարութիւններ եւ նեղութիւններ ու աղքատութիւն նոր պաշար կուտան անձնուրաքութեան այդ սիրոյ կրակը վառ պահելու համար: Այս հոգին է որ երկինքի դուռը կը բանայ դեռ անոր չգալած: Այս հոգիով է որ մեղաւորներուն սրտերը կը դառնան եւ թշնամիներ, բարեկամ կ'ըլլան: Անիկա այն հոգին է որ սատանան ամօթով կը ձգէ եւ մարդս Տէրոջը՝ իր աչքին բերին չափ արժէքաւոր կ'ընէ:

L. U. H.

ԻՆՉՊԵՆՍ ԱՊՐԵԼԻՈՒ Է ՅԱՂԹԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ

(Բ. Գլխուն շարք)

ԽՈՍՏՈՒՄ ՄԸ ԵՒ ՊԱՏՈՒԷՐ ՄԸ

Ի՞նչ է նոր Կառկարանի գլխաւոր նիւթը: Անոր մեծագոյն մասը կը տրվեցնէ քրիստոնեաներուն թէ ինչպէս ապրելու են, քրիստոս իբրեւ անձնական Փրկիչը ընդունելէ յետոյ: Անիկա առիթ քիչ կը խօսի մեղքին պատիժէն փախչելու մասին:

Մեր Տէրոջը ծնանդէն առաջ Տէրոջը հրեշտակը անոր համար ըսաւ, «Անոր անունը Յիսուս դնես, քանզի Անիկա իր ժողովուրդը իրենց մեղքերէն պիտի փրկէ» (Մատթ. Ա. 21):

Քրիստոս երբոր տակաւին նոր կ'սկսէր հրապարակային ծառայութեան՝ ըսաւ իր աշակերտներուն, «Եւ իման դուք կատարեալ եղէք, ինչպէս ձեր երկնաւոր Հայրն ալ կատարեալ է» (Մատթ. Ե. 48):

Այս խօսքերը նշանակութիւն մը ունենալու են: Մեր Փրկիչը անկարելի եղած բան մը պիտի չպատուիրէր մեզի: Վերոյիշեալ խօսքին մէջ Անիկա մեզի որոշապէս կը սրտոտ: Իրէ հասնիլ որոշ կատարելութեան մը, եւ նոյն իսկ կատարելութեան մը որ կերպով մը Հայր Աստուծոյ կատարելութեան նման ըլլայ:

Անիկա խիստ զարմանալի կէտ մըն է եւ առաւին ակնարկով անկարելի ու անհասկնալի կը թուի, սակայն միեւնոյն ատեն պատուէր մըն է:

Պետրոս առաքեալ Սուրբ Հովիթէն թելադրութեամբ ասոր շատ նման յորդոր մը կուտայ, «Հապաւ ձեզ կանջող Սուրբին պէս դուք ալ սուրբ եղէք ձեր բոլոր վարմունքներուն մէջ, վստահ գրութեամբ է թէ սուրբ եղէք, քանզի ես սուրբ եմ»: (Ա. Պետ. Ա. 15):

Ուրեմն մեզի որոշապէս կը պատուիրէ որոշ սրբութեան մը փրանալ, նոյնիսկ Յիսուս քրիստոսի սրբութեան նման սրբութեան մը:

Երբայցեւոց թուղթին հեղինակը կը ցուցնէ թէ որչան կարեւոր է սրբութիւնը. «Թաղաղութեան ետեւէ եղէք եւ սրբութեան, որ առանց անոր մէկը պիտի չտեսնէ Տէրը»: (Եբր. ԺԲ. 14):

Յովհաննէս առաքեալ պարզապէս կ'ըսէ թէ ինք կը գրէ իր առաջին թուղթը, որպէսզի ընթերցողները մեղք չգործեն: (Ա. Յովհ. Բ. 1):

Խոնարհարար կը հարցնեմ ուրեմն թէ արդեօք իմ կողմէն մեծամոռութիւն պիտի ըլլայ վերոյիշեալ խօսքերուն նշանակութիւնը հետազոտել:

Ո՞րն է մեծամոռութիւնը.— Մեծամոռութիւն պիտի ըլլար տարակուսիլ թէ Յիսուս քրիստոսի կամ Սուրբ Հովհաննէս ամէն պատուէրը կատարել կարելի չէ: Անկեղծօրէն Տէր Յիսուսի հետեւող ամէն մէկ անհատ Սուրբ գրքի այս խօսքերուն նշանակութիւնը հասկնալ ջանալու չէ՞ր:

Յիսուս քրիստոսի գալստեան կ'սպասե՞ս դու: Անոր յայտնութեան յոյսը ունի՞ս: Եթէ կ'սպասես, յիշէ թէ առկէ 1800 տարի առաջ Յովհաննէս առաքեալ կ'ըսէ. «Ես ամէն ով որ այս յոյսը անոր վրայ ունի, ինքզինքը կը մաքրէ, ինչպէս անիկա մաքուր է»: (Ա. Յովհ. Գ. 3):

Յովհաննէս առաքեալ կ'ակնկալէ քրիստոնեաներուն մէջ տեսնել մաքրութիւն մը որ քրիստոսի մաքրութեան կը նմանի:

«Ամէն ով որ Աստուծմէ ծնած է, մեղք չգործեր . . . չկրնար մեղք գործել . . . (Ա. Յովհ. Գ. 9):

Չիշեցինք Պօղոս առաքեալին յայտարարութիւնը այս մասին որ կ'ըսէ, «Դուք ձեր անձերը մեղքի մեռած սեպեցէք . . . մեղքը վրանիդ պիտի չիշխէ»: (Հռոմ. 2. 11-14):

Պօղոս կ'ըսէ նաեւ թէ անիկա ինչպէս կ'ըլլայ: «Հաւատքին վախճանը առէք, որով կարող պիտի ըլլաք ջարին ամէն կրակոտ նետերը մարելու»: (Եփես. 2. 16):

Հրատապ տենջ մը չհամակեր մեզ երբ այս համարներուն մէջ նկարագրութեամբ կեանքին գաղափարն իսկ արժնցուի մեր մէջ:

Արդ ինչ ալ որ ըլլայ մեր գաղափարը Սուրբ գիրքի

այս խօսքերու մասին, ինչ ալ որ ըլլան մեր նախապաշա-
րումները, մեր յանցանքները անցեալի մէջ, եւ որքան
ալ որ անշնորհին թուին մեզի այս խօսքերը, չենք կրնար
ուրանալ հետեւեալ իրողութիւնները Սուրբ գիրքին, այս-
ինքն Աստուծոյ խօսքին մէջ:

Ա. Միշի պատուիրած ած է կատարելութիւն մը՝ Հայր
Աստուծոյ կատարելութիւն նման:

Բ. Հրամայուած է սրբութիւն մը նոյն ինքն Աստուծոյ
սրբութեան նման:

Գ. Մատուցուած է մաքրութիւն մը Յիսուս Քրիստոսի
մաքրութեան նման:

Դ. Յուցուած է կարելիութիւն մը, ջարին ամէն մէկ
յարձակումին հաւատակելու:

Անանկ կատարելութիւն մը, անանկ սրբութիւն մը,
անանկ մաքրութիւն մը եւ անանկ զօրութիւն մը արտա-
դրող կեանքը անտարակոյս յաղթական կեանքն է: Յօժար
ենք այս խնդիրը ուսումնասիրելու: Անշուշտ Աստուծոյ
ծառը չընենք զմեզ երբ կը պատուիրէ մեզի ճշտել կեանքի
աստիճանի մը, որուն համեմատ անկարելի ըլլար, կամ մա-
տուցանելով մեզի բան մը, զոր ինք կարող չըլլար մեզի
տալ:

— Հարցը չէ Թէ կրնամ եւ ասորիլ յաղթական կեանք
մը: Բոլորս ալ գիտենք Թէ ասոր պատասխանը «Ոչ» է:
Կարեւոր հարցն է. Յիսուս Քրիստոս կրնա՞յ զիս սուրբ
ընել, զիս սուրբ պահել եւ ինծի յաղթութիւն պարգեւել:
Եթէ կրնայ, ջանենք անկէ այս բաները եւ Պօղոսի
նման ցնծութեամբ, միւսնոյն ասուն ամենապի խոնարհու-
թեամբ եւ երկարապառնամբ ջաղագոյնել նք, Վոնուսին
Աստուծոյ որ մեզի յաղթութիւն կրնայ մեր Տէր Յիսուս
Քրիստոսի ձեռքով: (Ա. Կորնթ. ԺԵ. 57):

(Նար.)

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԿԵԱՆՔԷ ԱՌԵՈՒԱԾ

ՇՊԱՐԸ

Յրանսական յեղափոխութեան ժամանակ
իշխանութիւն մը բռնուելով մահուան դատա-
պարտուեցաւ: Արտաքոյ կարգի գեղեցիկ կին
մըն էր ան, ուստի կախաղան բարձրանալէն
մի քանի վայրկեան առաջ իր նաժեշտէն
ինչորեք իրեն բերել երես շաւաբելու կարմիր
ներկի տուփը, իր երեսը եւ շրթունքները լաւ
մը ներկելու համար, որպէսզի զինքը կախա-
ղան բարձրացնողները իր գունատիւր չնշմա-
րէին, եւ այսպէս լաւ մը շաւաբուէլէն վերջ
մօտեցաւ կախաղանին: Չուանը վզին անցուե-
ցաւ եւ մէկ վայրկեանէն իշխանութիւնի գլուխը
մարմինէն զատուեցաւ առանց զէմքին վրայ
ոռնէ փոխուելուն նշմարուելու:

Դատապարտեալին շրթունքներուն վրայ

ժպիտն է որ կը փայլի, մինչ սրտէն արիւն կը
հոսի: Ի՞նչ կեղծիք, ի՞նչ խաբկանք:

Յաճախ ինծի կը հանդիպին արտաքինա-
պէս շատ ուրախ եւ երջանիկ մարդիկ, սակայն
եթէ գործիք մը ունենայինք որ կարող ըլլար
անոնց սքաին խորերը թափանցել, այն ատեն
միայն յայտնի պիտի ըլլար թէ անոնք իրաւ-
եւրջանիկ են թէ ոչ: Օ՛հ, ցաւալի իրականու-
թիւն է որ ասանկներուն սրտին մէջ շատ ան-
գամ վիշտը կը տիրապետէ, մինչդեռ վարդա-
գոյն երեւցող շրթունքները կարմիր ներկով
միայն ներկուած են:

Որչա՞փ մարդիկ կան, որոնք հրապարակի
վրայ գոհ եւ երջանիկ կ'երեւին, մինչդեռ
առանձին սենեակի մէջ եղած միջոցին աղի
արցունք կը թափեն. անոնք իրենց արտաքին
փայլը կ'ապահովեն, որպէսզի իրենց զէմքին
գունատութիւնն ու հոգւոյն վրդավաւմը անտե-
սանելի ըլլայ:

Արտաքին արդուզարդ ու գեղեցիկութիւնդ
ուրիշներու քու վրայ ունեցած լաւ համարու-
մը ժամանակաւոր թմրեցուցիչներ են, որոնք
քեզի երկարատեւ օգուտ չպիտի ընեն: Քու
հոգիիդ ցաւերովը, վիշտերովը եւ զայն ճշող
բոլոր ծանրութիւններովը Յիսուսի եկուր,
այն ատենն է որ քու զէմքդ իրապէս պիտի
փայլի: Այդ փայլը միայն բնական է եւ ան-
շաղար ու ճանաչելի աշխարհի եւ Փրկչիդ:

ԱՅՍՊԷՍ ՔՈՒ ԽԻՂՃԴ ԿՍՊԱՆՆԵՍ

ՈՐՊԷՍՁԻ ԱՆՀԱՆԳԻՍՏ ՁԸԼԼԱՍ.

ԲԱՅՅ . . .

Հարուստ կալուածատէր մը գործէն տուն
վերադարձաւ: Օրուան աշխատանքներէն յոգ-
նած անկողին մտաւ եւ ուզեց լաւ մը քնանալ:
Հագիւ աչքերը փակած էր, մէկէն շունը սկսաւ
ուժով մը հաջել: Մարդը սրտենդած գլուխը
անկողնէն դուրս հանեց եւ շունը կանչելով
սաստեց անոր որ լռէ: Շունը հնազանդեցաւ
իր տիրոջը, բայց հազիւ կէս ժամ անցած էր,
դարձեալ սկսաւ հաջել: Այս անգամ մարդը
պատուհանը բացաւ եւ կատաղօրէն որոտաց
շան ըվրայ զայն լոնցնելու համար: Շունը

լոեց, բայց շատ չանցած դարձեալ սկսաւ հաշել: Մարդը չկրնալով այլեւս իր բարկութիւնը զսպել, պատէն կախուած հրացանը քաշելով սպաննեց զայն: Անկէ վերջ անարգել միջեւ առաւօտ լաւ քուն մը քաշեց:

Հետեւեալ օրը արթննալուն պէս ախոռը իջաւ իր ձիերը խնամելու, բայց ափսոս, ի՞նչ տեսնէ աղէկ, երկու ձիերն ալ զոզցուած էին: Գողերը արգիւղդ պահապան շունը սպաննուած էր, եւ մէկ գիշերուան հանգիստ քունն ալ զրկած էր կալուածատէրը իր երկու նժոյգներէն:

Երբ Աստուծոյ հրաւերը կը լսես, երբ խիղճդ կը յանդիմանուի, մի՛ ըսեր թէ դեռ կանուխ է, աշխարհի հաճոյքները վայելեմ, վաղը կամ գալ տարի դարձի կուգամ: Այսօր եկուր, քանի դեռ շնորհաց եւ ողորմութեան դռները բաց են քեզի համար, վաղը կրնայ շատ ո՛ւշ ըլլալ: Քու Փրկչիդ մեղմ ձայնն է որ քեզ կը կանչէ, լսէ՛ Անոր:

ՄԱՆԿԱՆՅ ՍԻՒՆԱԿ

Ա Պ Տ Ա Կ Ը

○ ○ ○

Սիրելի տղաք, անշուշտ կը յիշէք լերան վրայի քարոզին մէջ յիշուած հետեւեալ խօսքը որ մեր Տէրոջը կողմէն խօսուեցաւ. «Թէ որ մէկը քու աջ ծնօտիդ ապտակ մը զարնէ, դարձուր անոր միւսն ալ»: Արդեօք ձեզմէ մէկը այս պատուէրին հետեւած է: Բայց ասիկա գերմարդկային է պիտի ըսէք ու շատ դժուար կատարուելիք պատուէր մը: Նշանաւոր նկարիչ մը անգամ մը ըսած է. «Թէ որ մէկը քու աջ ծնօտիդ ապտակ մը իջեցնէ, դուն ալ անոր ձախին երկու հատ իջեցուր»: Թերեւս ասոր իրաւունք պիտի տայիք, բայց ուշադրութիւն ըրէք: Երբոր մէկը հարուած մը կ'ընդունի, ու այն ալ երեսին վրայ, արիւնը անմիջապէս զուխը կը բարձրանայ եւ ներքին մթագոյն ոյժ մը զինքը վրէժխնդրութեան կը դրդէ: Յաճախ լսած էք որ մէկը իր բարկութեան պարագային ուրիշ մը սպաննած է եւ հարցաքննութեան առթիւ հասկցուած է որ անգիտակից վիճակի մէջ ըրած է ատիկա: Անոնք այս

հարուածի պարագային իրենց կամքէն դուրս զօրութեամբ մը այնպիսի զսպանակով մը շարժած էին որ երբեք կրցած չէին հաշուել իրենց այս վարմուքին արդիւնքը: Այսպիսի գերեալ վիճակի մը ենթարկուել լաւ կը սեպէ՞ք: Երբ ասոր վրայ խորհիք, այն ժամանակ թերեւս աւելի դիւրին պիտի հասկնաք թէ Յիսուս Քրիստոս ի՞նչ ըսել կ'օգտէր, երբ կը յիշէր, «Թէ որ մէկը քու աջ ծնօտիդ ապտակ մը զարնէ, դարձուր անոր միւսն ալ», այսինքն չարութիւնը չարութեամբ մի փոխարիներ:

Երբ մէկը չար տղու մը վարքը կ'օրինակէ, անոր գերին կըլլայ, մինչդեռ անոր օրինակին չհետեւիլ աւելի քաջութիւն, պաւլի հերոսութիւն է, ջանացէ՛ք ուրիշի մը տարափոխիկ հիւանդութենէն անձամբ չվճարակուիլ:

Երեւակայեցէք թէ տղայ մը միտքը կը դնէ երբեք ուրիշներու չղբերնել կ'անոնց չբարկանալ. զայս կը նշմարեն մէկ երկու տղաք իւ մտքերնին կը դնեն անպատճառ փորձութեան մէջ ձգել զինքը, եւ քանի մը օր վերջը անոնց մէջ մին գաղտուկ մը կը վազէ իր նետէն ու շտապիւն ապտակ մը կ'իջեցնէ իր ծնօտին, եւ ահա պատանին մոռցած իր որոշումը, կը փոխանակէ զայն, բայց անոնց խնդուքներէն ու քահաճանքներէն կը հասկնայ անոնց նպատակը ու կ'ամչնայ որ իր որոշման հաւատարիմ չմնաց, հասլա ընթացք տրուաւ իր զգացումներուն եւ այս յանկարծակի յարձակումին առջեւ պարտուեցաւ:

Արդ, երբ քու ընկերներդ սկսին զքեզ զրգոել ըսելով, «Թոյլ մի տար որ քեզ յիմարի տեղ դնեն, որքան որ համբերես» այնքան աւելի յանդուգն կը դառնան մարդիկ եւ ուստի պէտք է բիրտ ոյժ ցոյց տալ, այն ատեն խորհէ թէ չար տղու մը չարութեանը հետեւիլ աւելի աւելներ կը գործէ թէ քու մէջդ եւ թէ դիմացինին մէջ: Քու մէջդ կը մեռնի այն հոգեկան զօրութիւնը որ Քրիստոսի սուրբ կամքը կատարելու կը մղէ եւ դիմացինդ կը տեսնէ թէ իր վարքը արդիւնքներ երեւան կը բերէ եւ տղաքներէն շատեր իր վատ ընթացքին կը հետեւին, ուստի աւելի կը քաջալերուի:

Մի քաջալերել չար տղայ մը իր չարութեանը մէջ, հապա ժխտելով իր անիրաւութիւնը ցոյց տուր թէ դուն երբեք չես հաճիր

օլապիլիբրմի՝ իտի: Պէօյլէճէ իշէրի կիրախլէր էնալիտէ որդալարը սըրա կէլտի: Պատ. Պքսթըր էօյլէ հէրարէթ իլէ տուա էթտիքի, եանընտա տուրան դատը կէօգիաշլարը տէօքմէյէ պաշ-լատը: Վէ անտէն պու աճայիպ ինճիլ վա'իզի քէնախնէ մախտուս օլան իման ճէսարկթի վէ աթէշ իլէ սէօյլէտիքտէն սօնկրա սուլհ գատը-սընա տէօնէրէք «էֆէնտիմ իշթէ թուլթմազ իւզ-րէ էմր ալտըզըն-զ Պատ. Պքսթըր պէնիմ, շիմտի քէնախի սիգէ թէսլիմ էտէրիմ»:

Հաքիմ խըզմէթ էանասընտա իւահի հազի-դաթլարտան տ'րին պիր թէէասիա գապուլ էթ-միշ, վէ վազաալարա քիւլիւլէն ֆարգիլը նօգ-իտի նազարտան պազմաղա պաշլամըշ իտի: Օ թէատտի օլունանլարըն տօթթու վէ մէյանճըսը վէ տյնի վազըթտա հազիգի մլամին, սիր քրի-թիյան օլտու:

Միւթ. Ե. Պ.

ԱՅՎԼԸԳՎ ԿԷ ՓԱՔԼԷՆՄԷՔ

Ա. Յոլթ. 1 : 7

Գան վասըթասըլյա փաքէնմէք, գան վա-սըթասըլյա աֆվլըդտան ֆարգիլը պիր շէյ տիր: Գան վասըթասըլյա աֆվլըք հէփ կիւնահլարըն աֆվլըք տէմէք տիր. լաքին գան վասըթասըլ-լա փաքէնմէք, հէր պիր թէք կիւնահ իլէ ուզ-րաշըր: Նասըլ քի պիգ օգույօրուգ. «Անըն նուրտա օլտուղու կիպի նուրտա երիւրիւր իսէք պիրի պիրի-միգ իլէ միւշարէքթիմիգ օլուր, վէ անըն օլլու Յիսուս Բրիտտոսուն գանը պիգի հէր կիւնահտան փաքէլէր». հէր կիւնահտան: Պու թէճըրպի շախիւլէյէ (փորձառութիւն) մալիք օլապիլմէ-միւլ իշիւն հէր շէյտէն էվվէլ հէր թէք կիւնահըն մէյտանա գօնուլմասընա, վէ հէր կիւնահըն աշ-րընա անըն նուրտանա պիգէ կէօթէրիլմէսինէ միւտտաաէ էթմէմիգ կէրէք տիր: Պիգ կիւնահ-լարըմըզլա թօփտան (en gros) ուղրաշմալը տէ-յիլ իգ, իլլա Բապպըն անլէրի զըսըմլարա տըր-մասընա միւտտաաէ էթմէլիիգ, վէ բուհ իւլ գուտս էօյլէ սասըգ տըր քի պու շէյի իճրա էտէր: Անըն հէր թէք կիւնահը կէօգիւմիւգ էօնիւնէ գյարապ Ալլահըն նուրտանա նասըլ կէօրիւնիւ-յօր իսէ օ նուրտա կէօթէրիլմէսի իշիւն մուայյէն սաաթ վէ միւնաաէպէթի վար: Վէ պիգէ սիվալ էտէր քի օ կիւնահա տօղրու էէ մէվլի թուլթա-ճաղըլ:

Յովհաննէս առաքեալ տէյօր «էյէր պիգ անըն նուրտա օլտուղու կիպի նուրտա

եհլըրիւրսէք» տէյիլ քի պիգիմ ալիտ օլտուղու-մալգ ճէմիլէթին, եախօտ պիգիմ քէնախիմիգ իշիւն իտիալ տէյու սէչտիյիմիգ պիր պիրաաէր եա հէմշիւրէնին նուրտանա, իլլա անըն օլտուղու նուրտա: Պիգիմ էօմրիւմիւգտէ իշիւնա պուլուն-տուղումալ քրիսթիյան մուհիթինտէ պիգէ հիշ պիր վաղթ կիւնահ տէյու կէօրիւնմէյէն չօգ շէյ-լէր անըն նուրտանա կիւնահ տըրլար: Զիրա օ եալընըգ պիգիմ սէօգ վէ աթէլլէրիմիւլի տէյիլ, իլլա մուհիպպ վէ գալիմիւլիւն էֆքեարընը տա-խի տօղրու նուրա կէթիւրի, վէ պիգ թէճըրպի-միւլ իլէ աշլար-զ քի, պիգիմ իլէ մուսմէլէ էտէն գաթըն կէօղլէրի էօնիւնտէ հէր շէյ աշըգ վէ իւրիւնա տըր: Գան վասըթասըլյէ փաքէն-մէք, իլք եէրաէ կիւնահըն խարիճաէ կէօրիւնէն զըսըլ իլէ տէյիլ տիր, իլլա կիւնահ քէնախի տիր, քէնախին կիպի վէ գափալը շէքլէրիւնաէ: Անըն նուրտանա պու ճէլմէլ շէյլէր մէյտանա գօնուլուր վէ անլէրին էն ալիպի պիգէ կէօթէ-րիւր:

Իսրաէլ մուգատտէս թօփրադտա Բապպըն մէլուն սայսըզը շէյի ալտըզընտա, պիւթիւն գալմըն Ալլահըն հուգուրունա կէլմէսի լաղըմ օլտու, վէ սըպթտան սըպթտա, գապիլէտէն գա-պիլէյէ վէ խանէտէն խանէյէ տրանտը, թա քի գալմըն լանէթ ալթընա կէլմէսի քիմին սէպէ-պիւնտէն իտիյի անլաշըլուրն. (Յիսու 7.) Պու իճրա օլունուպ Իսրաէլ քէնախի կիւնահընը իզրար էտէ-րէք թէվաղու էթաիքաէն սօնրա օ լանէթտէն աղատ օլտու: Պու սէպէպաէն գան վասըթասըլ-լա փաքէնմէք իշիւն աշըն նուրտանա երիւրիւ-մէք շարթ տըր: Անըն նուրտանա կիւնահըն հէր պիր թէլի մէյտանա գօնուլուպ հիւքմ էաի-լիր: Պիգ կիւնահը պաստըրմաղա չարշմալը տէյիլիգ, իլլա անտէն հազիգաթիւն փաքէնմիւլի տրամալըլըգ, վէ պու Անըն օլլու Յիսուս Բրիտ-տոսուն գանընտա միւմքին տիր:

Տիգդաթա շայան տըր քի Յովհաննէս Առաք-եալ տէյօր. Պիգ Անըն նուրտա օլտուղու կիպի նուրտա երիւրիւր իսէք». Ալլահ նուրտա տըր վէ տէվամի սուրէթաէ նուրտա տըր: Էյէր պիգ հէր թէք կիւնահտան փաքէնմէք իսթէր իսէք հէր շէյտէն էվվէլ ալվամի սուրէթաէ նուրտա երիւրիւմիւլի էօյրէնմէք կէրիլիգ. պու կիւն նուրտա եարըն գուլմէթաէ, պիր հաֆթա քեամիլ վազֆիլէթլէ օլ պիր հաֆթա կէվլէք պիր էօմր տէյիլ, պէօյլէ պիր հալտէ պիգ տայ-մա գանըն աֆվ էտէն գուլմէթիւնի տրամաղա մէճպուր օլաճաղըլ, վէ գանըն փաքէլէյն գուլ-վէթիւնի պիլմէյէ ֆուրտաթըմըլ օլմարաճաղ:

Թարիֆ օլունմագ պիր ինայէթ տիր քի, պիզ ճիւմէ լէքէլէրիմիզ իլէ կիւնահ վէ նափաքլըզ-տան թաթհիր իչիւն աչլըմըզ փունարա գօշա-պիլիլիլիզ. Զաք. 13. 4: Լաքին տախմա պու հալ-տէ գալմամալըզ: Կիւնահլար աֆվլըզնաւան սօնրա կիւնահտան փաքլէնմէք կէլմէլի: Եօզ իսէ պիզ կէլ հաֆթա այնի կիւնահ իլէ երնէ գանըն ալթընա կէլիլիլիզ, վէ պէօյլէճէ սէնէ պէ սէնէ պու հալտէ աէվամ էսլըրիզ: Լաքին հէք քիմ քի կիւնահըն քէնախի իչիւն վէ Ալլահը իչիւն մանաւընըն նէ իտիյինի նուրաւա անլամըզ իսէ, օ եալընըզ աֆվլըզ իլէ գանաաթ էթմէզ, իլլա այնի աէրէճէտէ փաքլէնմէյի աէ արար: Բէսուլ էվվէլքի այէթաէ պէօյլէ եափմայան պի-րի իչիւն անըն գուլմէթաէ ելըրիւալիլիլիւ սէօյլէյօր:

Հէր կիւնահտան փաքլէնմէք, պու նաւըլ միւմքին տիր, պու Ալլահըն օլլու Յիսուս Քրիս-տոսուն գանը իլէ միւմքին տիր: Տիպպաթ էթ Յովհաննէս եալընըզ Յիսուսուն գանը աէմէյօր իլլա «Անըն օլլու Յիսուս Քրիստոսուն գանը»: Նէ՞ իչիւն պու լուղէթլէրի պիր պիրի արգաւըն-տա տիզիյօր, օ հէր հալտէ պու գանըն գուլ-վէթ ինի կէօզիլմիլըզ էօնիւնէ գօմագ իսթէյօր: Պիզի հէր կիւնահտան փաքլէնմէք պան Ալլա-հըն օլլու Յիսուս Քրիստոսուն գանը ալը:

«Բիւլիւք փէրթէվլէրալն»
Թէրէճէմէ

Ե. Պ.

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

ՏԵՂԵԿԱԳԻՐ ՖՐԱՆՍՍԵՐԻ ՀԱՅ ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ Բ. ՄԻՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎԻՆ

(Նար. 10 րդ թիւէն)

Միջեկեղեցական յարաբերութեանց մասին խոր-հրդակցութիւններ եղած միջոցին պէտքը տեսնուեցաւ շրջիկ քարոզիչի մը, որ կընայ այցելել բոլոր Ֆրանսա-յի հայ աւետարանական եկեղեցիները եւ անոնց մէջ մի-ութեան կապը վորացնել, բայց որովհետեւ աւետարանիչ-ներու չգոյութեան պատճառաւ կարելի չէր երազործել այս, որոշուեցաւ որ

Ա. Իւրաքանչիւր եկեղեցի տարին դէթ մէկ անգամ աւետարանական ժողովի տարքէ եւ փոխադարձաբար մէկ կամ երկու շաբթուան համար քոյր եկեղեցւոյ հո-վիւր հրաւիրէ սոյն ժողովներուն աւաջնորդելու, որով եկեղեցիներ երկուստեք օգտուած կընան ըլլալ:

Բ. Ամէն ամսուն վերջին Կիրակի երեկոյեան աղօ-թաժողովը միաբանական աղօթքի յատկացնել բոլոր

Ֆրանսայի հայ աւետարանական եկեղեցիներուն մէջ նոյն նիւթերու եւ պէտքերու շուրջ աղօթելով՝ Տէրոջը գոր-ծին շինութեան համար:

Լիօնի քարոզիչը Պատ. Պարտումեան խօսեցաւ Ա. Շ. Օ. ի Ֆրանսա-հայերու համար ըրած զոհողութեան մա-սին, պարզեց թէ ան ինչպիսի նախախնամական դեր մը կատարեց Ֆրանսայի եկեղեցիներուն համար, ինչպէս նաեւ Գ:Ն:Ս: Սուրբ գրոց ընկերութիւնը:

Ժողովը որոշեց այս երկու ընկերութիւններուն շնոր-հալալութեան նպակներ գրել:

Այս բանախօսութեան ընթացքին հետեւեալ որոշում-ները տրուած են:

Ա. Ֆրանսայի հայ աւետարանական եկեղեցիները վարող ex cathedra Comité ին մասնաւոր իրաւասութիւններ տու ու անոր իրաւունքները ընդլայնել: Այս քօմիթէն Բ. Պ. Լիւանեանի թեկադրութիւնով կազմուեցաւ վեց անդամներէ, որոնց երեքը հայ են իսկ երեքը ֆրանսացի:

Executive Comité իսկու ժողովին իրաւասութիւններու մասին հետեւեալ կերպով խորհուած է.

1. Եթէ եկեղեցի մը ինք իր մէջ դժուարութիւններ ունենայ եւ իր հագարաւորութիւնը կարող չըլլայ այդ դժուարութիւնները վերցնել, դիմելու է executive Comité-ին սոյն դժուարութիւնները բաւաւորել համար:

2. Ա. Շ. Օ. չկրնար նոր գործաւոր մը որոշել կամ աւետարանիչի մը գործի դաշտը փոխել աւանց executive comité ի հաւանութեան:

3. Ա. Շ. Օ. եթէ փափաքի ունէ աւետարանիչ մը դաստիարակել Սբ. գրական դպրոցին մէջ, պէտք է նա-խապէս սոյն քօմիթէին դաւախարան ու հաւանութիւնը ընդունի անոր վարքին բարբին եւ ընդհանուր յարմա-րութեանց մասին:

4. Ունէ օտար միախնայութիւն եթէ ուղէ մասնակի գործ մը սկսիլ ունէ սեղի մը մէջ գոյութիւն ունեցող աւետարանական եկեղեցիի մը հետ, պէտք է նախապէս executive comité ի հաւանութիւնը հարցնէ:

5. Ա. Շ. Օ. եւ Ամերիկայի հայ աւետարանական միութիւնը եկեղեցիներու հետ յարաբերելու են executive comité ի խաղովակով:

6. Եկեղեցիները իրենց տարեկան հասոյթի հարկերին երեսունը սոյն քօմիթէին կը տրամադրեն Ֆրանսայի հայ աւետարանական գործին ծաւալութեան համար: Այս կէտը քիչ մը աւելի բացատրելով կ'ուզենք ըսել թէ Executive Comité A. Շ. Օ. ի միջեւ հիմա տրամադրած տա-րեկան գումարները, ինչպէս նաեւ Ժընէվի Սօսիէթէ Էվանգէլիքի յատկացուցածները, եկեղեցիներէ եկած հասոյթները, Ամերիկայի հայ աւետարանականի ղրկե-լիք գումարները ի մի հաւաքելով զանոնք պիտի գո-ծածէ եկեղեցիներու պէտքերուն համաձայն հովիւներու, Սբ. գործախերու, աւետարանչուհիներու եւ աստուածա-բանութեան ուսանողներու թոշակներու համար, ինչպէս նաեւ նիւթապէս պիտի օժանդակէ առ որ անկ է:

Բ. Ժողովը չմոռցաւ Բանբերի մահճակալը, որուն համար ամսական 400 ֆրանք որոշեց: Եկեղեցիներու ներկայացուցիչները իրենց մէջ բաժնեկով այս գումարը

խոստացան կանոնաւորապէս վճարել, այս մասին վստահելով թոյր եւ եղբայրներու աջակցութեան : Մատթ. ԻԵ. 36 :

Նոյնպէս ժողովը ուրախութեամբ եւ շնորհակալութեամբ լսեց Ամերիկայի հայ աւետարանչական ընկերութեան կողմէ եղած պատրաստակամութիւնը օգնելու այս ընդարձակ ու կարօտ գաշտի գործին : Միութիւնս այս մասին խորհրդակցելու եւ աւետարանչականի հետ բանակցելու կատարեալ իրաւասութիւն սուտ իրաւունք ժողովին (Executive Comité) :

Միութիւնս ուրախութեամբ լսեց թէ մեր եկեղեցիներուն մէջ կային երիտասարդներ, որոնք բուռն փափաք կը տածէին հոգեւոր գործին լծուելու, եւ այնպէս յարմար սեպեց որ առ այժմ հինգ հոգի քստուածաբանական ծննդաբաններ մանեն : Ասոնցմէ մին Զաքարիա Պաւստեան (Մարտէյլէն) Բարիզ մեկնեցաւ Institut Bi.lique à Nogent sur Marne, հոն ուսանելու միեւնոյն տոնն Կիրակի օրերը Բարիզի մէջ հոգեւոր գործ ընելու : Կալվին Պարսումեան (Լիօնէն) մեկնեցաւ Institut E. Thomas Venne sur Lausanne, որուն կը յուսանք շուտով սլոնի հետեւին Սամուէլ Պազգալեան, Իորայէլ Աբրահամեան եւ Ներսէս Խոնջատուրեան Մարտէյլէն, որոնք իրենց անցողիկներուն Կ'սպանեն :

Միութեան ժողովի տեղադրութեան ամէն երեւոյ եղանակաւ աւետարանչական ժողովներ, զորք Տէրը օրհնեց եւ նոր հոգիներ աւելցան եկեղեցիին : Կազմուեցաւ զոյա հոգեւոր երիտասարդներէ բաղկացեալ երիտասարդաց ընկերութիւն մը : Ասիկա բոլոր Տէրը զաւակներուն աղօթքի նիւթ ըլլալու է որպէսզի Տէրը օրհնէ եւ գործէ այդ երիտասարդներուն մէջ եւ անոնց միջոցաւ :

Որոշուեցաւ յառաջիկայ տարուան միութեան ժողովը գումարել Տէրը կամքովը կրկին Լիօնի մէջ 1929 Օգոստոսի երկրորդ կէսին :

Ժողովականք իրարմէ բաժնուեցան Տէրը հաղար փառք տալով իր շնորհքին համար, որ զիրար ճանչնալու, զիրար վայելելու եւ սիրելու եւ իրարու համար աղօթելու այս օրհնեալ պատեհութիւնը տուաւ :

Միութեան անդամակիր

Ա. Օ. ՓԱՓԱՋԵԱՆ

.....

Ե. Ք. ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ԲԱՐԻԶԻ ՄԷՋ

— Բարի ի մէջ Յուլիէն ի վեր կազմակերպուած է Հայ Երիտասարդ Քրիստոնէական Ընկերութեան մասնաճիւղ մը, որ կը փութայ իմացնել իր շրջանի երիտասարդներուն թէ մեր ժողովներն չա՛ք քրիստոնէական դաստիարակութիւնները բաց են իրենց համար : Որոնք որ Կ'ուզեն մասնակցիլ սոյն հաւաքոյթներուն կը հրաւիրենք

զանոնք իրենց ընկերակցութեանը վայելելու քաջ առաւել փափաքով :

Իւրաքանչիւր ամսուայ արդշին եւ երրորդ Կիրակիները կէսօրէ կտք ժամը 3ին զոյգի կ'ունենան մեր հաւաքոյթները : Ունինք հոգեւոր դաստիարակութիւններ եւ Սուրբ զրոյց դասեր փոխ ի փոխ :

Հաւաքավայրն է Maison Fraternelle, 37, Rue Tournefort, Paris V. (Metro - St. Michel).

Թղթակցիլ ուզող եւ կամ մեր նվաճակի մասին աւելի մանրամասն տեղեկութիւններ առնել փափաքող անձինք թող հաճին զիմել ընկերութեան տանադպրին հետեւեալ հասցէով. —

Dikran Karamanougian

9, Avenue Leona, Colombes, (Seine)

Ի Դիմաց Բարիզի Ե. Ք. Ընկերութեան Վարչութիւն

«ԲԱՆԲԵՐ»Ի ԸՆՏԱՆԻՔԻՆ

ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Անցեալ թիւին մէջ յիշեցինք թէ անոնք որ իրենց հին հանգչներուն հետ մէկտեղ Ե. տարուան համար դարձեալ իրենց անուններն ու հասցէները չզրկեն մեզ, թերթերը պիտի դադրեցնենք այս տարւոյն վախճանին, լայն հասկցողութեամբ թէ ալ չեն ուզեր շարունակել :

Եթէ կ'ուզէք Ե. տարուան առաջին թիւը ճիշդ ժամանակին հասնիլ, հաճեցէ՛ք չչեմեռազել : Զրկեցէ՛ք նաեւ այն անուններն ու հասցէները, որոնց պիտի փափաքէիք «Բանբեր» նուիրել, որպէսզի անոնք եւս իրենց «Բանբեր»ները ժամանակին ընդունին :

Ըստ կարելոյն Ձեր անունին հետ Ձեր Ե. տարուան բաժնիկինն ալ զրկե՛ք հաճեցէ՛ք :

Le Gérant : PASTEUR KALTENBACH

Տպար. Ա. Երեցեան, 40, Րիւ տէ Տօմինքէն